ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 7-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

30 նոյեմբերի, 2002թ. *ք. Երեւան*

Նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ ՀՀԿ 7-րդ արտահերթ համագումարը:
Համագումարի աշխատանքներին մասնակցելու համար գրանցվել է 590 պատվիրակ:
Հաստատման ներկայացվեց 7-րդ արտահերթ համագումարի օրակարգը.

- ***Հանրապետության Նախագահի առաջիկա ընտրությունների նկատմամբ ՀՀԿ դիրքորոշումը***
- ***ՀՀԿ խորհրդի նախագահ Ա. Մարգարյանի զեկույց***
- ***Ելույթներ***
- ***ՀՀԿ կանոնադրության և Ծրագրի համապատասխանեցումը «Կուսակցությունների մասին » ՀՀ օրենքի պահանջներին***

Զեկուցող Գ. Մինասյան

ՀՀԿ 7-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՀՀԿ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի Հանրապետականներ,

Կուսակցության այսօրվա արտահերթ համագումարը հրավիրվել է մեր երկրում նախագահական հերթական ընտրությունների շեմին, ինչը նշանակում է, որ այդ առիթով մեր արտահայտելիք դիրքորոշումը, մեր մոտեցումները ուղենշելու են Հանրապետականներիս առաջիկա հինգ տարիների գործունեությունը կամ մեր նպատակների, մեր ծրագրային դրույթների իրագործման մարտավարությունը:

Չորս տարի առաջ, արտահերթ նախագահական ընտրություններում քաղաքական հստակ դիրքորոշմամբ Հանրապետական կուսակցությունը՝ Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ, սկիզբ դրեց մի գործընթացի, որն այսօր շարունակվում է: Մեր ազգի ու պետության համար վճռորոշ, սկզբունքային հարցերի շուրջ մոտեցումների ընդհանրությունը դարձավ Հանրապետական կուսակցության և Ռոբերտ Քոչարյանի համագործակցության այն հիմքը, որի վրա խարսխվեց մեր հետագա համատեղ գործունեությունը: Որեւէ մեկին իրավունք վերապահված չէ խմբագրելու անցյալը, իրեն հարմար տեսանկյունից ներկայացնելու կուսակցության ու նրա ղեկավարի 98-ին կայացրած որոշումը: Վազգենը չկա, և ոմանք փորձում են այդ հանգամանքն օգտագործելով նրան ներկայացնել իբրև մոլորյալի: Սպարապետը մոլորյալ չէր, այդ պնդումն անողներն են մոլորեցնողներ: Եւ ընտրված ուղու ճշմարտացիության, նախագահ Քոչարյանին պաշտպանելու ու նրա հետ միասին ճանապարհ գնալու վերաբերյալ ուզում եմ բոլորիդ հիշեցնել ՀՀԿ V համագումարում այդ առիթով Վազգենի շատ հստակ ձևակերպումը. «Լևոն Տեր-Պետրոսյանը հեռանալով՝ մեզ վրա մեծ պատասխանատվություն է թողել: Մենք համոզված ենք, որ ճիշտը մենք ենք, բայց դեռ ձեզ և ժողովրդին էլ պիտի ապացուցենք, որ ճիշտը մենք ենք: Ռոբերտ Քոչարյանի հետ մենք ճակատագրով ենք կապված... Վերջին մեկ տարվա ընթացքում ով չի հոգնել՝ այդ մասին խոսել է: Ասում եմ մեկընդմիշտ, առաջին եւ վերջին անգամ, որովհետեւ ավելորդ ճամարտակությունների կարիք չունեմ. մենք մտերիմ ընկերներ ենք, մենք մարտական ընկերներ ենք... Մենք նաեւ ապացուցելու բան ունենք»:

Մեր անցած վերջին մի քանի տարիների դժվարին, խոչընդոտներով լի ճանապարհը այդ ճշմարտացիության ապացուցմանն էր ուղղված, մեզ թողած պատասխանատվությունը նախագահի հետ միասին պատվով տանելուն: Այսօր որևէ փաստ չկա, որ նախագահի հետ մեր հռչակած ընդհանուր սկզբունքներից շեղում արձանագրի, որը հիմք կհանդիսանար Հանրապետականի համար վերանայել իր վերաբերմունքը: Հակառակը՝ միասին անցնելով բոլոր դժվարությունները, 1999-ի համազգային ողբերգությունից հետո, ուժ գտնելով կիսատ մնացած գործը շարունակելու, տեր կանգնելու մեր խոստումներին, մենք այդ ծանր պահերին, երբ չորս կողմից Հանրապետականի պարտությունն էին գուժում, հաստատապես հայտարարեցինք, որ մնում ենք մեր դիրքերում, որ, այո, մենք իշխանություն ենք, որքան էլ այդ բառից ոմանք վախենում են (իրականում վախենալով պատասխանատվության բեռից), ի՞նչ երաշխիք, որ չես տապալվի: Մեզ համար երաշխիքներ կային՝ դա առաջին հերթին անմնացորդ նվիրվածությունն էր մեր դավանած գաղափարին, մեր անցած ճանապարհը, մեր ընկերների՝ Ստեփան Ջատիկյանի, Աշոտ Նավասարդյանի, Վազգեն Սարգսյանի և անբասիր կենսագրությամբ մեր շատ ու շատ ընկերների հիշատակի առջև հարգանքն ու պարտքը, որոնք անկախության պայքարի ճանապարհին՝ սկսած խորհրդային բանտերում անմարդկային, դաժան փորձությունների ենթարկվելուց մինչեւ արցախյան հերոսամարտ, իրենց կյանքը նվիրաբերեցին Հայաստանի անկախության ու հավիտենականության գաղափարին: Նրանք մեզ պարտադրում են ապացուցել մեր ճշմարտացիությունը:

Դարձալ ետ նայելով, անդրադարձ կատարելով դեպի համատեղ ճանապարհի սկիզբը, ուզում եմ հիշեցնել նաեւ 1999-ի հունվարի 29-ի մեր համագումարում հնչած նախագահ Ռոբերտ Քոչարյանի ուղերձից մի հատված. «Մենք ձեզ հետ միասին պատասխանատվություն ենք ստանձնել մեր երկրի եւ ժողովրդի առջեւ: Դա նշանակում է, որ Հայաստանի

Հանրապետական կուսակցությունը, լինելով երկրի նախագահի հուսալի հենարանը, պետք է իր նպատակասլաց եւ եռանդուն մասնակցությունն ունենա մեր հասարակության եւ պետության կյանքում՝ ըստ ամենայնի աջակցելով երկրի տնտեսական վերելքին, ներքաղաքական կյանքի կայունությանը, ժողովրդավարության արմատական խորացմանը, պետական մեքենայի աշխատանքի կատարելագործմանը եւ դրանց ճանապարհին ծառացող խոչընդոտների հաղթահարմանը»:

Այսօր որեւէ մեկը չի կարող ժխտել ներքաղաքական կյանքի կայունության ապահովման գործում Հանրապետականի վճռորոշ դերը, մեր տնտեսության մեջ արձանագրվող դրական տեղաշարժերի հիմք դարձած՝ նախագահ-կառավարություն-ԱԺ համագործակցության ձեւավորմանն ուղղված ջանքերը եւ կտրականապես մերժումը ազգակործան պալատական ինտրիգների ու երկպառակությունների: Չեմ ցանկանում թվեր ու փաստեր վկայակոչել՝ դրականը հիմնավորելու համար, քանզի անցած երկու տարիներին կառավարության հաշվետվություններում, նաև մեր հերթական համագումարում դրանք հանգամանորեն ներկայացվել են, առաջիկայում էլ նախագահն իր հնգամյա գործունեությունն ամփոփելիս, այդ ամենին դարձյալ կանդրադառնա:

Մեզ համար այսօր անչափ կարեւոր է եղած ձեռքբերումները պահպանելն ու մեր ծրագիրը կիսատ չթողնելը: Ես շատ եմ ցանկանում, որ Հայաստանում ոչ մի կառավարություն այսուհետ նախորդից ստացած ծանր ժառանգության մասին չմտածի, այլ մեր պետականության ամրացող պատին եւս մի քար ավելացնի, որը ոչ միայն այդ կառավարությանն է անհրաժեշտ, այլ ամբողջ հասարակությանն ու պետությանը:

Նախորդ՝ հերթական համագումարում մենք խոսել ենք սկզբունքային մի շարք խնդիրների մասին, որոնք տեղ են գտել համագումարի բանաձևում: Ուզում եմ հիշեցնել դրա առաջին կետը՝ արձանագրելով, որ 1999թ-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում ՀՀԿ-ն ստանձնել է քաղաքական պատասխանատվություն երկրի ներկայի և ապագայի, կառավարություն կազմավորելով՝ նաև կառավարության վարած քաղաքականության համար, կրկին հավաստելով իր հավատարմությունը նժդեհյան գաղափարախոսությանն ու դավանած արժեքներին, Հանրապետականը միանգամայն իրատեսական է համարում «Միասնություն» դաշինքի և կառավարության գործունեության ծրագրերի լիակատար իրագործումը:

Այս համոզվածությունը մեզ երբեք չի լքել, ավելին՝ դաժան փորձություններից հետո էլ ավելի է ամրապնդել մեր հաստատակամությունը՝ շարունակել սկսած գործն ու պատվով ավարտին հասցնել, որովհետև մեզանից շատերին դեռ 60-ականներից միավորում է մի գաղափար, որն այսօր իրականություն է՝ դա Հայաստանի անկախ Հանրապետությունն է: Եվ մեր պետության ներկայի ու ապագայի համար պատասխանատվությունից, այո, մենք իրավունք չունենք խուսափելու: Ես այս օրերին ավելի ու ավելի եմ համոզվում, որ մեր պայքարը դեռ չի ավարտվել, որ այսօր էլ, երբ հայոց անկախ պետականության մեջ, որքան էլ տարօրինակ է, հաջորդ՝ IV Հանրապետությունը հիմնելու մասին եւ այսօրինակ այլ բանդագուշանքներ են հնչում, քանի դեռ հազար ու մի ճղճիմ, նեղ անձնական, մանր կենցաղային, սոսկ կուսակցական հավակնություններով պայմանավորված՝ ոմանք անկախության գաղափարն են փորձում արժեզրկել, մենք դեռ շատ անելիք ունենք: Մեր պայքարն այսօր տեղափոխվել է տնտեսության, պետական շինարարության, մեր երկրի հզորացման, նրա անվտանգության երաշխիքների ապահովման դաշտ: Այդ պայքարում, ես համոզված եմ, մենք հաղթող ենք դուրս գալու, և թերահավատների մոտ սեփական երկրի անկախության անհրաժեշտության գաղափարն այլևս չի պայմանավորվելու առօրյա կենցաղային դժվարություններով, իսկ անկախության աներեր գաղափարակիրներն ավելի քան հպարտ են կանգնելու հայոց պետության դրոշի տակ: Ստրկահոգի անհատներն ու քաղաքական ուժերը, որոնց պակասը մենք մեր դարավոր պատմության մեջ, որքան էլ ցավալի է, չենք ունեցել, պիտի քաջ գիտակցեն, որ պարսկամետ ու թուրքամետ, արևմտամետ ու ռուսամետ, հետագայում էլ չգիտեմ ինչամետ կողնորոշումները, սեփական եկրին տեր կանգնելու փոխարեն տեր փնտրողները պատմության դատին հանձնվելով՝ մշտապես դատապարվելու են: Սեփական արժանիքները չգիտակցելը, համաշխարհային գործընթացներում հայոց պետության արժանի տեղն ու դերը ճիշտ չպատկերացնելը, միջազգային հանրությանն ինտեգրման պրոցեսները՝ անպայման խամաճիկ դառնալու հետ շփոթողները մերժելի են հայ հասարակության կողմից ինչպես մինչ

այժմ, այնպես էլ այսօր և համոզված եմ, այսուհետ ևս:

Այսօր էլ, նախընտրական շրջանում, մի խումբ մարդկանց կողմից հնչում են կոչեր, խոստումներ, որ ժամանակին պետք է, որ իրականություն դարձած լինեին՝ տարբեր տարիներին իրենց տրված հնարավորությունների պարագայում, սակայն նույնպիսի ջանադրությամբ ու ոգեւորությամբ այդ նույն ծրագրերը դարձյալ հասարակությանն են հրամցնում, թերեւս թյուրիմացաբար, մարդկանց կարճ հիշողությանն ապավինելով:

Մենք մեր ծրագրային դրույթների կատարման մասին այսօր արդեն բավականին ասելիք ունենք եւ համարում ենք, որ դրանց իրագործման ճանապարհին երկրի նախագահի հետ համագործակցությունը եղել է արդյունավետ: Անցած հինգ տարվա նրա գործունեության ընթացքում մեզ համար նկատելի են այն դրական տեղաշարժերը, որ գրանցվել են երկրի տնտեսական, քաղաքական բարեփոխումների ճանապարհին, արտաքին քաղաքականության ասպարեզում: Նախագահը բազմիցս է վերահաստատել Լեռնային Ղարաբաղի հարցում իր դիրքորոշումը եւ այն սկզբունքները, որից շեղումներն անթույլատրելի է համարում: Այդ դիրքորոշումը մենք պաշտպանել ենք 98-ին (մեր մոտեցումները հստակ ամրագրված են կուսակցության համագումարների բանաձեւերում) եւ պաշտպանում ենք այսօր, քանի որ հակառակն ապացուցող որեւէ փաստ չկա մեր մոտեցումներից շեղվելու հետ կապված: Մեր երկիրը շարունակում է միջազգային հանրությանն ինտեգրվելու ճանապարհը, այլեւս Եվրախորհրդի անդամ Հայաստանը օրեր անց կդառնա Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ, որի համար շուրջ տասը տարի է բանակցում է: Այս ամենը մեր աչքի առջեւ է, եւ մենք այդ ամբողջ ընթացքում կողքից նայողի դերում չենք եղել: Սա նաեւ նախագահին Հանրապետական կուսակցության սատարելու, մեր ձեւավորած կառավարության ու նրան մշտապես աջակից խորհրդարանական մեծամասնության աշխատանքի արդյունքն է: Նախագահն իր ծրագրերում իրատեսորեն նախանշել է կարճաժամկետ եւ երկարաժամկետ ծրագրեր: Իրագործված առաջինի վերաբերյալ իր հաշվետվության մեջ նա առաջիկայում կմանրամասնի, երկրորդն ընթացքի մեջ է, եւ կարծում եմ, նույնպիսի հետեւողական մոտեցման արդյունքում ավարտին կհասցվի: Սա ամենեւին չի նշանակում, թե մեր իրականության մեջ ամեն ինչ այնքան լավ է, որ բացասական երեւույթների, թերացումների մասին խոսելն ավելորդ է: Ամենեւին ոչ: Նույն ընդդիմությունն էլ այսօր պնդում է, որ ոչինչ միանգամից չի լինում: Մենք այսօր խոսում ենք դրական միտումի, մեր երկրի զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման, այդ ճանապարհին ընկած խնդիրների աստիճանական լուծման մասին: Ովքեր են հակառակը պնդողները եւ ինչ են ասում նրանք: Այդ մարդկանց մի խումբը նույն է ասում, ինչ մինչեւ 1998թ-ը: Նրանց փաստարկներին մենք ժամանակին հակադարձել ենք, եւ հարկ չեմ համարում կրկին այդ մասին խոսել, մյուս խումբը խոսում է այն խնդիրներից, որոնք ժամանակին հնարավորություն ունեցել է լուծել, բայց ոչինչ չանելով՝ իրեն իրավունք է վերապահում այսօր էլ խոսել դրանց մասին ու իրագործման պահանջներ ներկայացնել: Այս կեցվածքը մեզ համար ընդունելի չէ: Հաջորդ խմբի մեջ նախագահի մշտական թեկնածուներն են, որոնց գոյությունը քաղաքական դաշտում, թերևս, արդարացվում են միայն հերթական անգամ առաջադրումով: Այս խմբին առանձնապես անդրադառնալու հարկ չկա:

Այս ամենը նկատի առնելով և կուսակցության խորհրդում քննարկելով մեր հետագա քայլերը, գտել ենք, որ 1998-ին ընտրված համատեղ ճանապարհը պետք է շարունակվի, ուստի 2003թ. նախագահական ընտրություններում էլ խորհուրդն առաջարկում է պաշտպանել Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը: Սա նշանակում է, որ Հանրապետական կուսակցությունն իր վճռորոշ դերով շարունակելու է պատասխանատու լինել երկրի տնտեսական, քաղաքական կյանքի համար: Մեզ համար կարեւորը մեր ծրագրային դրույթների իրագործումն է, եւ եթե դրա ընթացքը բավարար է, մենք սոսկ կուսակցական հավակնություններով չենք առաջնորդվի, ինչը ենթադրում է ընտրություններին սեփական թեկնածուով հանդես գալ, եւ որի մասին հատկապես ՏԻՄ ընտրություններում Հանրապետականի տպավորիչ հաղթանակից հետո չեն դադարում բացահայտ հնչող առաջարկներն այս ու այն կողմից: Այո, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները մեզ համար որոշ չափով մեր ուժերի, հնարավորությունների փորձարկում էին, լավ առիթ՝ թույլ կողմերը ժամանակին հայտնաբերելու, թերությունները շտկելու համար: Այս դահլիճում ներկա ձեզանից շատերն

այդ ընտրություններում եղել են կուսակցության տարածքային ու մարզային շտաբների ղեկավարներ, անմիջականորեն զգացել այդ ամենը, եւ պետք է առաջիկա ընտրությունների շեմին կարողանան ճիշտ հետեւություններ անել: Օգտվելով առիթից, ցանկանում եմ շնորհավորել նոր ընտրված և վերընտրված հանրապետական համայնքապետերին, քաղաքապետերին, ավագանու անդամներին, մաղթում եմ աներեր հավատ ձեր ուժերին ու մեր գաղափարին և հաջողություն ձեր ծանր ու պատասխանատու աշխատանքում: Հանրապետականներն այսօր լայնորեն ընդգրկված են երկրի կառավարման համակարգում՝ օրենսդիր, գործադիր իշխանությունում, տեղական ինքնակառավարման մարմիններում և համոզված եմ, ինչպես մինչ այժմ, այսուհետ ևս իրենց ամենօրյա աշխատանքով կնպաստեն հանրապետության նախագահի, կառավարության որդեգրած քաղաքականության իրագործմանը, որոնք համահունչ են մեր ծրագրին:

Սպասվող ընտրություններից առաջ կցանկանայի մի քանի ընդգծումներ անել. մեզ համար, նկատի ունեմ ոչ միայն կուսակցության, այլ ընդհանրապես մեր պետության, անչափ կարեւոր է առաջիկա ընտրությունները կազմակերպել ու անցկացնել այնպես, որ ոչինչ չստվերի եւ հարցականի տակ չդնի դրա արդյունքները, չխաթարի այնքան դժվարությամբ ձեռք բերված ներքաղաքական կայունությունը, պատճառ չդառնա երկրի ներսում վստահության ճգնաժամի եւ վերջապես, չվնասի Հայաստանի վարկանիշը: Հանրապետական կուսակցությունն իշխանության մեջ ունեցած իր լծակներով եւ այլ կուսակցությունների հետ համագործակցելով, պետք է անի ամեն հնարավորը՝ ընտրություններն օրենքի շրջանակներում, պատշաճ մակարդակով անցկացնելու համար: Ժողովուրդը պետք է հնարավորություն ունենա ոչ թե միմյանց հասցեին հնչող վիրավորանքներից, հայհոյանքներից, այլ ներկայացվող ծրագրերից հետեւություն անել եւ ընտրություն կատարել: Էթիկայի պահպանումը, գրվածի կողքին նաեւ չգրված՝ բարոյական նորմերի պահպանումը ընտրություններին մասնակցող ցանկացած անհատի ու քաղաքական ուժի համար պարտադիր պայման պետք է լինի:

Այժմ մի քանի խոսք կուսակցության կանոնադրական որոշ խնդիրների փոփոխության անհրաժեշտության մասին. ընդունվեց «Կուսակցությունների մասին» օրենքը և մենք պարտավոր ենք մեր կանոնադրությունը համապատասխանեցնել դրան: Կյանքը ցույց տվեց, որ անհրաժեշտ է ծրագրային փաստաթղթում կատարել շտկումներ ու ավելի արդիականացնել այն: Առաջարկվում է նաև վերականգնել ներկայացուցչական ժողովի ինստիտուտը, ավելի ընդլայնել կազմը և մշտական կապ ստեղծել տարածքային կազմակերպությունների հետ:

Ավարտելով ելույթս, կոչ եմ անում աշխատել ակտիվ, նվիրումով, օգտագործել կուսակցության ներուժը՝ իրականացնելու ՀՀԿ խորհրդի առաջարկությունը համագումարին. 2003թ. նախագահական ընտրություններում պաշտպանել Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը:

2003թ. նախագահի ընտրություններում Ռ.Քոչարյանի թեկնածությունը պաշտպանելու առաջարկով հանդես եկան ՀՀԿ խորհրդի նախագահի տեղակալ Տ.Թորոսյանը, ՀՀԿ կանանց հանձնաժողովի անդամ Ծ.Դանուխյանը, ՀՀԿ երիտասարդական կազմակերպության փոխնախագահ Է.Շարմազանովը, ՀՀԿ անդամ Հ.Նավասարդյանը:

ՀՀԿ 7-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Արտահերթ համագումարում արտահայտելով ՀՀԿ-ի դիրքորոշումը նախագահական ընտրություններում, առաջին քայլն է արվում նախապատրաստվելու խորհրդանական ընտրություններին: ՀՀԿ-ի համար ինքնանպատակ չէր ակտիվ մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը, ապա նախապատրաստվելը նախագահական և Ազգային ժողովի ընտրություններին: Մեր դիրքորոշման շնորհիվ հետագայում կապահովենք լիարժեք արդյունավետ աշխատանք: ՀՀԿ-ն իր փորձով համոզվեց, թե ինչ լուրջ բարդություններ կան համագործակցության հարթությունում: Դրանք դրսևորվում են ոչ բոլորովին ՀՀԿ և ՀՀ նախագահ համագործակցությունում, այլ շատ հաճախ շահարկվում է Ազգային ժողովում ՀՀԿ պատգամավորների քանակով, որը ոչ ավելի է, քան 30 պատգամավոր: Այնուամենայնիվ, ՀՀԿ-ն երբեք չգնաց կառավարությունն ամբողջովին վարելու քաղաքականությանը այս ժամանակահատվածում: Հարցը ոչ թե պատասխանատվությունից խուսափելն է, այլ այն, որ մեր ընտրողները մեզ վստահել են երկիրը տանել մեր կողմից ընտրած ճանապարհով: Մեր հաջողությունները արդյունավետ եղան միմիայն մյուս քաղաքական ուժերի հետ համագործակցության շնորհիվ, ինչու չէ, նաև ընդդիմադիր ուժերի աջակցության շնորհիվ: ՀՀԿ երբեք չվախեցավ իշխանությունից հեռանալուց ու չփորձեց ընդդիմություն դառնալ: Կուսակցությունն այդ բարդ ժամանակաշրջանում պատվով է կատարել իր դերը: Առաջիկա ընտրություններում պարզ կդառնան մեր ձեռքբերումները:

ՀՀ նախագահի հետ համագործակցությունը այս երեք տարիներում եղել է լիարժեք, որը մեզ հնարավորություն է տալիս մեր վստահությունը հայտնել առաջիկա ընտրությունների վերաբերյալ: Միասնական քաղաքական թիմ ունենալու խնդիրն է, որ մեզ համար վճռորոշ է նախագահական ընտրությունների հարցում: Ինչ ձեռք է բերվել, եղել է ծանր աշխատանքի գնով, և մենք պարտավոր ենք այն տանել մինչև վերջ: Հիմնական գաղափարները, որ առաջադրվել էին այս տարիներին, նույն էին ՀՀԿ-ի և ՀՀ նախագահի համար: Հայաստանն այլևս շրջափակման մեջ չէ և ավելի լիարժեք է գործում միջազգային քաղաքակրթություններում: Ղարաբաղյան հարցում որևէ այլ որոշում չի ընդունվել: Եվ չարչրկված Ստամբուլյան գագաթնաժողովում Ղարաբաղի հարցի շուրջ որևէ նոր ձևակերպում չտրվեց:

Տնտեսության առաջընթացի նկատելի աճ կա: Սակայն քաղաքական ձևակերպում չի եղել և մեր խնդիրն է առաջիկայում այն տրամաբանական ավարտին հասցնել: Սա բերում է մի հետևության. այն ինչ արվել է՝ պետք է ավարտվի, այն ինչ կիսատ է՝ պետք է ամբողջացվի: Այս ճանապարհը պետք է շարունակվի այնպես, ինչպես սկսել ենք: Ե՛վ նախագահական, և՛ խորհրդարանական ընտրություններում մենք ակնկալում ենք ժողովրդի աջակցությունը: Համագումարում ընդունած իր որոշումով ՀՀԿ-ն պետք է պաշտպանի ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը առաջիկա նախագահական ընտրություններում:

Մենք պատրաստ ենք համագործակցելու գործող նախագահի հետ և ձեռք բերելու ժողովրդի վստահությունը նախագահական ընտրություններում:

Շնորհակալություն:

ՀՀԿ 7-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՀՀԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ ԷԴՈՒԱՐԴ ՇԱՐՄԱԶԱՆՈՎԻ ԵԼՈՒՅԹԸ

Հայաստանի Հանրապետական կուսակցության VII արտահերթ համագումարի մեծարգո նախագահություն, համագումարի հարգարժան մասնակիցներ, հյուրեր

ՀՀԿ երիտասարդական կազմակերպությունը միշտ էլ պարտաճանաչորեն ընդունել և կատարել է կուսակցության համագումարների և ՀՀԿ խորհրդի որոշումները: Ինքնին հասկանալի է, որ ՀՀԿ VII արտահերթ համագումարի որոշումները ևս պարտադիր պետք է լինեն ՀՀԿ երիտասարդական կազմակերպության և նրա բոլոր անդամների համար: Կարծում եմ, համագումարի մասնակիցներին կարող է հետաքրքրել ՀՀԿ երիտասարդական կազմակերպության վերաբերմունքը գործող նախագահ և ՀՀ նախագահի թեկնածու Ռ.Ս.Քոչարյանի հանդեպ:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ նախագահի և ՀՀԿ ակտիվ համագործակցության շնորհիվ մեծ առաջընթաց է գրանցվել երիտասարդական քաղաքականության ոլորտում: Խոսենք փաստերով: 1998թ. հիմնադրվել է և առ այսօր Ռ.Քոչարյանի բարձր հովանավորությամբ գործում է Համահայկական Երիտասարդական Հիմնադրամը, որի հոգաբարձուների խորհրդի երկու անդամները ՀՀԿ երիտասարդական կազմակերպության ներկայացուցիչներն են: Հիմնադրամը ֆինանսավորում է երիտասարդական հասարակական կազմակերպությունների և ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների կողմից ներկայացրած ծրագրերը, որոնց նախագահների մեծ մասը ևս ՀՀԿ երիտասարդական կազմակերպության անդամներ են:

ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության հետևողական քաղաքականության հետևանքով 2003թ-ի բյուջեում երիտասարդությանը նախատեսված գումարը 3 անգամ ավելին է , քան եղել է 1998թ-ին:

Հայրենիք-Սփյուռք վեհաժողովների արդյունքում հիմնադրվեց Համահայկական Երիտասարդական Կենտրոն հիմնադրամը, որի նախագահն է ՀՀ վարչապետ, ՀՀԿ խորհրդի նախագահ Ա.Մարգարյանը: Այս ծրագրի շրջանակներում «Լինսի» հիմնադրամից տրամադրվել է 2 մլն. դոլար՝ Ծաղկաձորում հյուրանոցային համալիր կառուցելու համար, որտեղ էլ կկայանան հավաքները:

Այս տարի ամռանը Դիլիջանում մեծ շուքով անցկացվեց Համահայկական երիտասարդական «ԲԱՋԵ» հավաքը, որի բոլոր երեք ճակատների ղեկավարները ՀՀԿ երիտասարդական կազմակերպության անդամներ էին, իսկ հավաքի հանդիսավոր բացումը վերապահված էր ՀՀ վարչապետ, ՀՀԿ խորհրդի նախագահ Ա.Մարգարյանին:

Պարբերական բնույթ են կրում նաև ՀՀ նախագահի այցելությունները ԲՈՒՀ-եր, որին ակտիվ մասնակցություն են ունենում ՀՀԿ երիտասարդական կազմակերպության անդամները:

Այս ամենն իրավունք է տալիս ասելու, որ երիտասարդական քաղաքականության բնագավառում ՀՀԿ-ի և գործող նախագահ Ռ.Քոչարյանի մոտեցումները համընկնում են, ուստի ՀՀԿ երիտասարդական կազմակերպության կողմից լիազորված եմ տեղեկացնելու, որ առաջիկա նախագահական ընտրություններում ՀՀԿ երիտասարդական կազմակերպությունը, հետևելով ՀՀԿ VII արտահերթ համագումարի որոշմանը, պատշտպանում է գործող նախագահ Ռ.Քոչարյանի թեկնածությունը:

Շնորհակալություն ուշադրության համար:

ՀՀԿ 7-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՀԱՍՄԻԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի հյուրեր, կուսակիցներ, պատգամավորներ, կառավարության և իշխանության մարմինների աշխատակիցներ.

Թույլ տվեք Նավասարդյանի ընտանիքի անունից ողջունելու այսօրվա նախաձեռնության առթիվ՝ նախագահական ընտրություններին մեր մասնակցության համար:

Նավասարդյանների ընտանիքը այս ընտրություններում պաշտպանում է Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը:

Եկեք այնպես կազմակերպենք նախագահական ընտրությունները, որ ժողովրդի առջև պատվով դուրս գանք:

Նավասարդյանն Անկախության ճանապարհն էր բռնել, Քոչարյանն Անկախության ճանապարհով այսօր թեկնածու է դառնում, Հանրապետականը ձևավորվել է Անկախության օրերին, մենք Անկախացած ենք գնում դեպի Պետականություն:

Եկեք համախմբված ու սիրով անցնենք այս ճանապարհը:

Շնորհակալություն:

Առաջարկը դրվեց քվեարկության և բաց քվեարկությամբ հաստատվեց միաձայն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 7-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետական կուսակցության 7-րդ արտահերթ համագումարը որոշում է.

2003թ. փետրվարի 19-ին կայանալիք ՀՀ նախագահի ընտրություններում պաշտպանել Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը:

ՀՀԿ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

* * *

Օրակարգի հաջորդ՝ ՀՀԿ կանոնադրության եւ Ծրագրի համապատասխանեցումը «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին հարցի կապակցությամբ զեկուցումով հանդես եկավ ՀՀԿ խորհրդի անդամ պարոն Գագիկ Մինասյանը:

ՀՀԿ 7-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԳԱԳԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի հանրապետականներ.

«ՀՀ կուսակցությունների մասին» նոր օրենքի ընդունումը անհրաժեշտություն է առաջացրել փոփոխություն կատարել ՀՀԿ ծրագրում ու կանոնադրությունում: Կուսակցության ծրագրի և կանոնադրության փոփոխված օրինակում շեղատառերով գրված են այն մտքերն ու ձևակերպումները, որոնք բխում են նշված օրենքի պահանջներից: Այդ փոփոխություններից կարևորում եմ կուսակցությանն անդամակցելու հարցը. համաձայն կատարված փոփոխության, կուսակցությանը կարող են անդամակցել նաև ընտրության իրավունք ունեցող ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձիք, որոնք, ըստ էության, Ադրբեջանից բռնագաղթած մեր հայրենակիցներն են: Սա մի նոր հնարավորություն է մեր հայրենակիցների համար, որպեսզի նրանք կարողանան ինտեգրվել մեր հասարակությանը:

Երկրորդ փոփոխությունը կապված է ներկայացչական ժողովի կառույցի վերականգնման հետ: Հին հանրապետականները լավ են հիշում գործող մի կառույց՝ ներկայացչական ժողովը, որի վերականգնումը հնարավորություն կընձեռի կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնին սերտորեն աշխատելու կուսակցական կառույցների հետ:

3-րդ փոփոխությունը պարզաբանում է կուսակցության համագումարում ընդունվող որոշումների ընդունման կարգը՝ բաց կամ փակ քվեարկությամբ:

Քվեարկության արդյունքում հաստատվեց Հայաստանի Հանրապետական կուսակցության ծրագիրը առաջարկվող փոփոխություններով :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿ 7-րդ արտահերթ համագումարի որոշումը ՀՀԿ Ծրագրի և կանոնադրության փոփոխությունների մասին

ՀՀԿ 7-րդ արտահերթ համագումարը, քննարկելով ՀՀԿ ծրագրի եւ կանոնադրության փոփոխությունները,

որոշեց

Հաստատել ՀՀԿ ծրագրային հիմնադրույթները և կանոնադրական փոփոխությունները «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: